ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 03.06.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/34

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Բ. Հարությունյան,
Մասնակից՝ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի տնօրեն Կ. Մարգարյան,

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7262-2019 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի 26.04.2019թ. թիվ 01/293-19 գրության հիման վրա, 02.05.2019թ. «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ն 26.04.2019թ. թիվ 01/293-19 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք, որ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33 ծածկագրով փականի գնման ընթացակարգում «Կա ընդ Կո» ՍՊԸ-ն 1-ին չափաբաժնով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից: Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Կա ընդ Կո» ՍՊԸ-ին առաջարկվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերն:

«Կա ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափորոշիչը հիմնավորող պայմանագրերը չէին հանդիսանում ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33 ծածկագրով փականի գնման հրավերով նախատեսված նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրեր:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով՝ «Կա ընդ Կո» ՍՊԸ-ին առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նոր փաստաթղթեր:

«Կա ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 2017 թ-ի փետրվարի 1-ին «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի և «ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ» ՍՊԸ-ի միջև կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագիր: Ներկայացված միակ պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 108 147

283(մեկ հարյուր ութ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր երկու հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ: Վերը նշված պայմանագրով «Կա ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից Կապալառուի մոտ իրականացված աշխատանքների ժամանակ տեղադրվել են նմանատիպ ապրանքներ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 10 257 600 (տաս միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որը պակաս է է քան «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից կատարված գնային առաջարկի(24 840 000 ՀՀ դրամը) 50%-ը, այն է 12 420 000(տասներկու միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամը:

Առաջնորդվելով ՀՀ կառավարության կողմից 2017 թ-ի մայիսի 4-ին հաստատված «Գնման գործընթացի կազմակերպման» կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետով գնահատող հանձնաժողովը «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի հայտը մերժել է:

ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:»:

3. <u>«ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 03.05.2019թ. գրությամբ դիմել է «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7262-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը 27.05.2019թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Համաձայն ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33 ծածկագրով «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Փական»-ի ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցման հրավերի 1-ին մասի, 2.5 կետի, 1-ին ենթակետի, ա մասի, «մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր»:

Ինչպես երևում է կապալի աշխատանքների կատարման պայմանագրի 01 փետրվարի 2017թ. (հետայսու նաև՝ Պայմանագիր) հետևյալ կետերից՝

1) 1.1 ենթակետի «....իր նյութերով և սարքավորումներով իրականացնել Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պարույր Սևակի 8/3 հասցեում կառուցվող մարզաառողջարանային համալիրի ինժեներական կառուցվածքների մոնտաժման,

կարգաբերման և գործարկման աշխատանքները, համաձայն սույն Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվի...»

2) 4.1.6 ենթակետի «Աշխատանքը կատարել իր ուժերով, նյութերով և միջոցներով»

3) 4.1.7 «Պատասխանատվություն կրել իր կողմից տրամադրված նյութերի և սարքավորումների որակի համար»

Նշված երեք կետերը վկայում են դրա մասին, որ Պայմանագրի շրջանակներում կապալառուն, այսինքն «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն կատարել է, ոչ միայն մոնտաժման, կարգաբերման և գործարկման աշխատանքները այլ նաև սարքավորումների մատակարարման աշխատանքները: Որպես ներկայացվածի ևս մեկ ապացույց, այն է որ Պայմանագրի և Պայմանագրի կից լոկալ նախահաշիվներում, բացակայում է, արտահայտություն, որ «նյութերը և սարքավորումները» տրամադրում է պատվիրատուն: Այլ կերպ ասած վերոնշյալ Պայմանագիրը կարող էր տրոհվել երկու պայմանագրերի՝

1. նյութերը և սարքավորումները մատակարարման պայմանագիր,

2. կապալային աշխատանքների՝ ինժեներական կառուցվածքների մոնտաժման, կարգաբերման և գործարկման աշխատանքները:

Պատվիրատուն սակայն նպատակահարմար է գտել կնքել մեկ Պայմանագիր, «կապալային աշխատանքների կատարման» վերնագրով, որտեղ առ կա էին մատակարարման և աշխատանքների կատարման տարրերը: Պատվիրատուի տեղեկանքը առ այն, որ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից նշված Պայմանագրի շրջանակներում կատարվել է սարքավորումների ամբողջական մատակարարումը կցվում է: Միաժամանակ, Պայմանագրին կցվում է Երևան համայնքի ավարտական ակտի (շահագործման թույլատվություն) N 01/19-18/80665-426 առ 08.11.2018թ. պատճենը, որը վկայում է Պայմանագրի պատշաճ ձևով իրականացրած լինելու փաստի վերաբերյալ:

Անհրաժեշտ է նաև նշել, որ «Քաղաքացիական օրենսգրքի» «702 Հոդվածի Կապալառուի միջոցներով աշխատանքներ կատարելը» 1-ին մասի համաձայն՝ «Աշխատանքը կատարվում է կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով, եթե այլ բան նախատեսված չէ կապալի պայմանագրով»: Այսինքն կապալային աշխատանքների կատարման ժամանակ, չի արգելվում նյութերի և սարքավորումների մատակարարումը, իսկ ինչպես երևում է վերը նշված Պայմանագրից տեղի է ունեցել, նաև սարքավորումների մատակարարում, թե արտասահմանից և թե ՀՀ տարածքից:

ՄԱՍ 2. Նախկինում կատարված պայմանագրի մատակարարված ապրանքների ծավալի՝ գումարային արտահայտությամբ, հիսուն տոկոսից ոչ պակաս լինելու փաստի, քան

գնման ընթացակարգով առաջին տեղը զբաղեցրած մասնակցի գնային առաջարկի ՀԻՄԱՎՈՐՈՒՄ.

Դիմողի կողմից Արձանագրության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գնահատող հանձնաժողովը ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրել է ոչ ամբողջությամբ, որն էլ թույլ չի տվել հանգել այն եզրակացության, որ նախկինում կատարված պայմանագրի մատակարարված ապրանքների ծավալի՝ գումարային արտահայտությամբ պակաս չէ սույն բողոքարկվող ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից («ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի գնային առաջարկը 24 800 000 ՀՀ դրամ), մասնավորապես՝

1) Արձանագրության (հարց 1) 3-րդ կետում ասվում է «... տարբեր տիպի փականներ, զագլուշկաներ, ֆլանեցներ, ներդիրներ, 1 320 000 (մեկ միլիոն երեք հարյուր քսան հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով»: Նշված հաշվարկի հետ համաձայն չենք ՝ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ գնահատականով, բաց է թողնված որոշակի քանակությամբ սարքավորումներ և չի հաշվարկվել՝ 10,0% շահույթը և 20% ԱԱՀ-ն, «1. Կապալի աշխատանքների կատարման պայմանագիր առ 01 փետրվարի 2017թ.» «Ընդամենը» տողում թվային արտահայտությունը՝ 1 774 872 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուն չորս հազար ութ հարյուր յոնանասուներկու) ՀՀ դրամ:

2) Արձանագրության (հարց 1) 1.3 ենթակետում ասվում է «...կապալային աշխատանքների պայմանագրի շրջանակում տեղադրված DAN X7/14-LPHW valve DN 100 տիպի փականի արժեքը կազմել է .... 6 626 400 (վեց միլիոն վեց հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ..»: Նշված հաշվարկի հետ համաձայն չենք՝ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ գնահատականով չի հաշվարկվել՝ 10,0% շահույթը և 20% ԱԱՀ-ն, «2. Contract No 414-1 14/04/2017թ.» «Ընդամենը» տողում թվային արտահայտությունը՝ 8 738 400 (ութ միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

3) Գնահատող հանձնաժողովի ուշադրությունից դուրս է մնացել և Արձանագրության մեջ տեղ չի գտել որևիցե ակնարկում, հաշվարկ, հիմնավորում, դիրքորոշում և այլն կապված « Договор поставки N T-05015 առ 05.05.2015թ.» վերաբեյալ: Նշված պայմանագրով գնված սարքավորումները տեղադրված են Պայմանագրի շրջանակներում իրականացված աշխատանքներում և լիովին համապատասխանում են հրավերի I -ին մասի 2.5 կետի, 1 - ին ենթակետի, ա մասի, երկորդ պարբերության այն է՝ «Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փականների, ծորակների և նմանատիպ սարքերի մատակարարված լինելը» պահանջներին:

Այսպես՝

ա) «Товарная накладная N 34 от 05.04.2017г.» առկա են սարքավորումներ, որոնք տեղադրված են «Ներածման ագրեգատ Լ=2700մա/Ժ տաքասում 29 կՎտ, սառեցում 17 կՎտ DIMMAX SCIROCCO 35w-2» համակարգի մեջ (Լոկալ նախահաշիվ N 3, II Նկուղային հարկ, ֆիտնես սրահ և անձակազմի սենյակներ, կետ 1):

Տես հաշվարկ հիմնավորման կետի «3. Договор поставки N Т-05015 առ 05"05"2015թ" (Товарная накладная N 34 от 05.04.2017г.)» բաժնում N 5, 6, 7, 9 տողերը (номер по порядку):

բ) «Товарная накладная N 34 от 05.04.2017г.» առկա են սարքավորումներ, որոնք տեղադրված են «Կանալային ներածման ագրեգատ Լ=1500մա/Ժ $Q_ջ$ = 18 կՎտ, $Q_ս$ = 9 կՎտ, 1տ1=200Պա DIMMAX SCIROCCO 20w-2» համակարգի մեջ (Նախահաշվի լրացում N 1, կետ 1):

Տես հաշվարկ հիմնավորման կետի «3. Договор поставки N Т-05015 առ 05.05.2015թ. (Товарная накладная N 34 от 05.04.2017г.)» բաժնում N 1, 2, 4, 14 տողերը (номер по порядку):

գ) «Товарная накладная N 34 от 05.04.2017г.» առկա են սարքավորումներ, որոնք տեղադրված են «Ներածման ագրեգատ Լ=1700մա/Ժ տաքացում 21 կՎտ, DIMMAX SCIROCCO 20w-2» համակարգի մեջ (30.11.2017թ. «Կատարված աշխատանքներ», I Հարկ Հանդերձարաններ և ցնցուղարաններ, կետ 1, էջ 1/10):

Տես հաշվարկ հիմնավորման կետի «3. Договор поставки N Т-05015 առ 05.05.2015թ. (Товарная накладная N 34 от 05.04.2017г.)» բաժնում N 1, 3, 13, 14 տողերը (номер по порядку):

դ) «Товарная накладная N 34 от 05.04.2017г.» առկա են սարքավորումներ, որոնք տեղադրված են «Ներածման ագրեգատ Լ=1200մա/Ժ տաքացում 14 կՎտ, սառեցում 7 կՎտ DIMMAX Scirocco 15w-2» համակարգի մեջ (30.11.2017թ. «Կատարված աշխատանքներ», II Հարկ Սրճարան, դահլիճ, մերսման սենյակներ և հանդերձարաններ, կետ 1, էջ 1/10):

Տես հաշվարկ հիմնավորման կետի «3. Договор поставки N Т-05015 առ 05.05.2015թ. (Товарная накладная N 34 от 05.04.2017г.)» բաժնում N 8, 14, 15 տողերը (номер по порядку):

Ինչպես երևում է հաշվարկ հիմնավորման կետ «4. Ամփոփ հաշվարկ» բաժնում «Ընդամենը» տողում թվային արտահայտությունը ստացվում է՝ 12 546 831 (տասներկու միլիոն հինգ հարյուր քառասունվեց հազար ութ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ, որը լիովին

բավարարում է նախկինում կատարված պայմանագրի մատակարարված ապրանքների ծավալի՝ գումարային արտահայտությամբ, հիսուն տոկոսից ոչ պակաս լինելու փաստին: Այսպես 12 546 831 ՀՀ դրամը հիսուն տոկոսից ավել է քան ներկայացրած գնային առաջարկը (24 800 000 ՀՀ դրամ):

Ամփոփելով սույն մասը անհրաժեշտ է նշել, որ ինչպես երևում է առ 01 փետրվարի 2017թ. կապալի աշխատանքների կատարման պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելվածները, կատարված աշխատանքների ակտերը, ապրանքների հայտարարագրերը և տրանսպորտային ընկերությունների հետ համապատասխան պայմանագրերը (ընդհանրապես ներկայացված չեն եղել) ներկայացված են եղել, ոչ ամբողջ ծավալով, քանի որ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից իրականացված նախնական հաշվարկները (մինչև գնահատող հանձնաժողովին տրամադրելը) ցույց էին տալիս, որ լիովին բավարարում է նախկինում կատարված պայմանագրի մատակարարված ապրանքների ծավալի՝ գումարային արտահայտությամբ, հիսուն տոկոսից ոչ պակաս լինելու եզրույթին:»:

4. <u>ՍՑ-LO-2019/34 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

«Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար փականի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն:

«ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 3 հավելվածով՝ որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 5 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ, որի ընդհանուր գինը կազմել է 24 840 000 ՀՀ դրամ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 14.03.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

Նույն արձանագրության հիման վրա, գնահատող հանձնաժողովը ծանուցել է «ԿԱ ԸՆԴ ԿՈ» ՍՊԸ-ին' առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսված հավելվածները՝ կից փաստաթղթերով:

«Կա ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափորոշիչը հիմնավորող պայմանագրերը չեն հանդիսացել «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով փականի գնման հրավերով նախատեսված նմանատիպ ապրանքների մատակարարման պայմանագրեր:

Գնահատող հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ. Մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետով, ծանուցել է «Կա ընդ Կո» ՍՊԸ-ին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ նոր փաստաթղթեր:

«Կա ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 2017 թ-ի փետրվարի 1-ին «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի և «ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ» ՍՊԸ-ի միջև կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագիր: Ներկայացված միակ պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 108 147 283 (մեկ հարյուր ութ միլիոն մեկ հարյուր քառասունյոթ հազար երկու հարյուր երկու հարյուր ութսուներեք) ՀՀ դրամ:

Վերը նշված պայմանագրով «Կա ընդ Կո» ՍՊԸ-ի կողմից իրականացված աշխատանքների ժամանակ տեղադրվել են նմանատիպ ապրանքներ, որոնց ընդհանուր գումարը կազմում է 10 257 600 (տաս միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որը «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից կատարված գնային առաջարկի (24 840 000 ՀՀ դրամ) 50%-ից պակաս է:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 17.04.2019թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ որոշել է «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

Նույն արձանագրությամբ «ԵՋԷԿ-ԳՀԱՊՁԲ-19/33» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7262-2019 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և

փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը…:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված

պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի

շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից.

Հրավերի 2.5 կետի համաձայն.

«Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ սույն ընթա¬ցա¬կարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայ¬տությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն ընթացակարգի իմաստով նմանատիպ են համարվում փականների, ծորակների և նմանատիպ սարքերի մատակարարված լինելը:

բ. սույն ենթակետի ա) պարբերությամբ նախատեսված պահանջներին իր համապատասխանությունը հիմնավորելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն, պայմանով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում հանձնաժողովին կներկայացնի նախկինում կատարած պայմանագրի (պայմանագրերի) և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, իսկ այդ պայմանագրի (պայմանագրերի) պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

գ. մասնակցի որակավորումը այս չափանիշի գծով գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն ենթակետով նախատեսված պայմաններն ու պահանջները:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,
2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,
3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը փաստում է, որ «Կա ընդ Կո» ՍՊԸ-ի և «ԷՅ ԴԻ ԷՅ ԹԵՔ» ՍՊԸ-ի միջև 01.02.2017թ.-ին կնքված կապալային աշխատանքների կատարման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իրականացրած աշխատանքների ժամանակ Մասնակցի տեղադրված նմանատիպ ապրանքների ընդհանուր գումարը կազմում է 10 257 600 (տաս միլիոն երկու հարյուր հիսունյոթ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, որը պակաս է «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի (24 840 000 ՀՀ դրամը) 50%-ը:

Անդրադառնալով Մասնակցի այն պնդմանը, որ *«1 320 000 ՀՀ դրամ և 6 626 400 ՀՀ դրամ գումարների նկատմամբ 10,0% շահույթ և 20% ԱԱՀ չի հաշվարկվել»*, Բողոքներ

քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի պահանջն է որ նախկինում (համանման) կատարված պայմանագիրը (սույն դեպքում իրականացրած աշխատանքների շրջանակում տեղադրված նմանատիպ ապրանքների ընդհանուր գումարի մասին է խոսքը), գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից: Այլ կերպ ասած, էականն ոչ թե այն գումարային արտահայտությունն է, որը, գուցե, կձևավորվի հաշվարկներ կատարելու արդյունքում, այլ Պայմանագրի շրջանակներում իրականացրած աշխատանքների ժամանակ տեղադրված նմանատիպ ապրանքների ընդհանուր գումարն է էական:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև անդրադառնալ Մասնակցի այն պնդմանը, որ՝ *««ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ գնահատականով, բաց է թողնված որոշակի քանակությամբ սարքավորումներ և չի հաշվարկվել՝ 1 320 000 ՀՀ դրամ գումարի նկատմամբ 10,0% շահույթը և 20% ԱԱՀ-ն: Կապալի աշխատանքների կատարման պայմանագիր առ 01 փետրվարի 2017թ.-ին, «Ընդամենը» տողում թվային արտահայտությունը՝ 1 774 872 (մեկ միլիոն յոթ հարյուր յոթանասուն չորս հազար ութ հարյուր յոնանասուներկու) ՀՀ դրամ: Նույն պայմանագրի շրջանակում տեղադրված DAN X7/14-LPHW valve DN 100 տիպի փականի արժեքը կազմել է ոչ թե 6 626 400 (վեց միլիոն վեց հարյուր քսանվեց հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, այլ՝ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ գնահատականով չի հաշվարկվել՝ 10,0% շահույթը և 20% ԱԱՀ-ն, «2. Contract No 414-1 14/04/2017թ. «Ընդամենը» տողում թվային արտահայտությունը՝ 8 738 400 (ութ միլիոն յոթ հարյուր երեսունութ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ»:*

Վերոնշյալի հետ կապված՝ պետք է փաստել հետևյալը.

Նախ թե 1 320 000 ՀՀ դրամ և թե 6 626 400 ՀՀ դրամ գումարների նկատմամբ 10% շահույթ և 20% ԱԱՀ հաշվարկելու դեպքում Մասնակցի կողմից նշված համապատասխանաբար 1 774 872 ՀՀ դրամ ու 8 738 400 ՀՀ դրամ գումարների փոխարեն ստացվում է այլ գումար (1 320 000 + 10% շահույթ և 20% ԱԱՀ = 1 716 000 ՀՀ դրամ, 6 626 400 + 10% շահույթ և 20% ԱԱՀ = 8 614 320):

Երկրորդ՝ թե 01.02.2017թ.-ին կնքված Կապալի աշխատանքների կատարման պայմանագրում, և թե 14.04.2017թ.-ին կնքված N 414-1 պայմանագրում նշված չեն համապատասխանաբար 1 774 872 ՀՀ դրամ ու 8 738 400 ՀՀ դրամ գումարներ, առավել ևս թվային արտահայտությամբ:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է ... իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Նույն կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Վերը նշված դրույթների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը պարտավոր է ներկայացնել հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված հայտարարություն (այսուհետ՝ Հայտարարություն): Եվ եթե Հայտարարությունը որակվի որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնի հրավերով նախատեսված

փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերը շարադրվածից ելնելով՝ տվյալ մասնակցի հայտը պետք է մերժվի, մասնակիցն էլ ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ ներկայացնելով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին հավաստող՝ իր կողմից հաստատված իրականությանը չհամապատասխանող հայտարարություն, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նշվածով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների մասին իրականությանը չհամապատասխանող հայտարարություն ներկայացրած անձինք գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն, ու այդ դեպքում մասնակիցը պետք է ընդգրկվի գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ն, Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, ներկայացնելով նախկինում կատարված կապալի պայմանագիր, որի շրջանակում իրականացրած աշխատանքների ժամանակ տեղադրված նմանատիպ ապրանքների ընդհանուր գումարը պակաս է գնային առաջարկի 50%-ից, չներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ, նյութեր կամ պայմանագրի պատշաճ կատարումը հավաստող ապացույց, չի բավարարել Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, դրանով իսկ խախտել է

գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.05.2019թ. թիվ 26/26-1/7262-2019 գրությամբ «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «ԿԱ ընդ ԿՈ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**